Օգոս էառ զնա 'ի կնութիւն, և զՊրնկար չար թագաւորն յաքսորս առաքէր:

Օգոս երկրորդ սկսաւ յամի Տեառն Ջ.Հ.Օ.Թ.: Նա լուեցոյց զպապն Յովհաննէս երկոտասաներորդ վասն վատնութեան և շռայլութեան իւրոյ, և զԼէոն պապն հաստատեաց. քանզի միշտ 'ի գետորայս և որսոց պարապէր, և յայտնի հրապարակաւ զկանայս հարճս առ ինքն պահէր, և ո՛րչափ գիր նախատանաց գրէին իւրն՝ վասն այն, ոչ կասէր երբէք, և ընկեցաւ յաթոռոյն: Իսկ Հռոմայեցիքն զԲենետիկոս երրորդ պապ արարին: Նա Կայսերն լուեալ՝ եկն զօրօք 'ի վերայ նորա՝ և յաղթեաց, և զՊապն Յովհաննէս դարձեալ կացոյց 'ի պապութեան:

Օգոս երրորդ ինքնակալեալ ամս Ժ.Բ. հալածեաց զՅոյնս 'ի Կալոնիոյ. դաւ գործեցին նմա զօրքն իւր. զոր փախեալ մազապուրծ եկն 'ի Հռոմ. և ժողովեալ

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան